

3кп 13
9-29

ՄԻԱՅԵԼ ՁԱՌՏԱԿԻՅ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԱՎԱԼՈՒՆ ՀԱՐ-
ՁԱԿՄԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(Կոմյերիսականնեի՛ն՝ ՀամԿԿ (ք) XVI Համա-
գումարի մասին)

ՅԿՈՒՅ

Գ-29

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1981

16 JUL 2013

63/2

3K013

9-29

25 AUG 2005

09 DEC 2009

ՄԻՔԱՅԻԼ ԶԱՌԻՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԱՎԱԼՈՒՆ
ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(Կոմիտեի անդամներին՝ Համ ԿԿ (բ) XVI-րդ
համագումարի մասին)

ՄԻՔԱՅԻԼ ԶԱՌԻՍՅԱՆ



ՅԵՐԵՎԱՆ 1981

12142-57

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԾ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՒՄԱՐԸ

Տասնվեցերորդ համագումարը բալլեօվիկական կուսակցության հայական պատմության մեջ կանցնի՝ վերաբերյալ պատմական մեծ վորոշումների համագումար:

Տասնվեցերորդ համագումարը տեղի ունեցավ արտասովոր բարդ և հետաքրքիր պարագաներում:

Տասնինգ և տասնվեցերորդ համագումարների միջանկյալ լերկու և կես տարվա ժամանակաշրջանը բեկման ժամանակաշրջան չեղավ՝ թե կապիտալիստական լերկրների և թե ԽՍՀՄ համար:

Այդ ժամանակաշրջանում Խորհուրդների Միությունն ընթանում էր և շարունակում է ընթանալ իր տնտեսական և քաղաքական զարգացման վերելքի ուղիով:

Իսկ կապիտալիստական աշխարհն ընթանում է ելքի դժուր. նրան հյուծում է տնտեսական խոր և տեղական ճգնաժամը: Կապիտալիզմի արևը դեպի իր մուտքն է խոնարհվում:

Խորհուրդների լերկիրը՝ բալլեօվիկյան կուսակցության և նրա հիմնադրամբ, լենինյան գլխավոր դժի հիմունքով պատմական սահմանագծին — XVI

Հրատ. № 1471

Գրառեպ. № 5894 (բ) Պատվեր 1294. Տիրաժ 3000.

Պեհրատի տպարան Յերևանում

համագումարին հասավ աննախընթաց հաջողութիւններով և վերելքով՝ սոցիալիստական շինարարութեան բոլոր բնագավառներում: Մեր յերկիրը հաջողութեամբ դուրս գալով վերականգնման շրջանից, թեւակոխեց վերակառուցման շրջանը:

Տերկրի ինդուստրացումն անցած ժամանակաշրջանում ընթանում եր բուռն, տնտեսապ տեմպով: Կյանքը գերադանցեց մեր աշխատանքների հնգամյա պլանի սկզբնական սահմաններին:

Մասսաների աննախընթաց ստեղծագործական վերելքի հիման վրա ձեռք բերված հաջողութիւնները կուսակցութեանը հնարավորութիւն տվին հնգամյակը չորս տարում իրագործելու խնդիրը գնել և հնարավորութիւն են տալիս մեզ ամենակարճ ժամանակի ընթացքում տեխնիկական և տնտեսապես համեմատելի տալիստական յերկրներին և անցնել նրանցից:

Այս բոլորը բազա ստեղծեց զուգարտնտեսութեան արմատական սոցիալիստական վերափոխման մասնալական կոլլեկտիվացման համար: Միջակը մասնաշրջանը շարժվեց դեպի կուստնտեսութիւն:

Ամբողջ ֆրոնտով սոցիալիստական առաջխաղացման անցնելը դասակարգային կռիվը սրեց մեր յերկրում: Հենվելով գյուղի բարակ-չքաղցրական մասնատների աճող ակտիվութեան վրա, ամբապնդելով դաշինքը միջակների հետ, կուսակցութեանը վճռական հարձակման դիմեց յերկրի կապիտալիստական տարրերի դեմ՝ առաջադրելով՝ կուլակութիւնը՝ փորպես դասակարգ: վերացնելու լուրջնգը:

«XVI համագումարը հանձնարարում է կուսակցութեան կէին ապահովել նաև հետագայում սոցիա-

լիստական շինարարութեան բայելելիկյան մարտական տեմպերը, հնգամյակը չորս տարում իրականացնել կատարել և անշեղորեն կենսագործել վողջ խորհ. Միութեան մեջ կուլակութեան՝ փորպես դասակարգի, վերացումը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա» (XVI համագումարի վորոշումներին):

Սոցիալիստական շինարարութեան աննախընթաց թափին զուգակցում է բանվոր դասակարգի նշանակալից քանակական չափերով աճումը, նրա նշուխական դրութեան բարվորումը, նրա քաղաքական ակտիվութիւնը և կուլտուրական մակարդակի բարձրացումը:

Յոթամյա բանվորական որվան, հնգորջա անընդհատ շարաթին անցնելը, աշխատավարձի բարձրացումը, դործազրկութեան խիստ կրճատումը—այս ամենը մեր անժխտելի աճման ցուցանիշներն են:

Սակայն չի կարելի կարծել, թե այդ անցած յերկու և կես տարվա ետապը, վերը թված հաջողութիւնները և հաղթութիւնները հեշտութեամբ են ձեռք բերվել:

«Ախալ կլինել կարծել, թե մենք այդ նվաճումները ձեռք ենք բերել «հեշտ ու հանգիստ» կիրպով, այսպես ասած՝ ինքնահոսի կարգով, առանց հատուկ ջանքերի յեվ կամքի շարման, առանց պայքարի: Այդպիսի նվաճումները ինքնահոսի կարգով ձեռք չեն բերվում: Այդ նվաճումները մենք ձեռք ենք բերել վճռական կռվում դժվարութիւնների դեմ, լուրջ յեվ տեվական պայքար մղելով այդ դժվարութիւնները հաղթահարելու համար» (Սեալին):

Մեր դժվարութիւնները աճման դժվարութիւններ են. վերակառուցման շրջանի դժվարութիւններ: Միշտգեո

կապիտալիստական չերկրներ ղեկավարութիւնները հա-
կառակ կարգի ծանր ճգնաժամի հետ կապված ղեկա-
րութիւններ են:

Այս ղեկավարութիւնները կուսակցութեան, կոմյե-
րիտմիութեան, բանվոր դասակարգի ալիքի անկալուն
խավերի մեջ անվստահութիւն են առաջ բերում:

Հիշատակված բոլոր հսկայական հաջողութիւնները
կուսակցութիւնը կարող էր ձեռք բերել միմիայն ամեն
չերանգի ոպորտյունի դեմ հետևողական և վճռա-
կան կռիվ մղելու պայմանով, չերկու ճակատի վրա
պայքարելով:

Ամբողջովին ջախջախելով հակահեղափոխական
տրոցկիզմը, կուսակցութիւնը վճռական պայքար էր
մղում և մղում է աջ ոպորտյունի դեմ, վորը սո-
ցիալիստական ծավալուն առաջխաղացման շրջանում
գլխավոր վտանգն է հանդիսանում, միաժամանակ հա-
կահարված հասցնելով տրոցկիզմի ռեցիզիվներին, ինչ-
պիսիք են «ձախ» վոստյուններն ու խոտորումները:

Կուսակցութեան լենինյան գլխավոր գիծն ան-
շեղորեն տանելով միայն ապահովեցին մեր հաղթա-
նակները:

Սոցիալիստական շինարարութեան բարձր տեմ-
պերը և ղեկավարութիւնները հաղթահարելու համար
մղվող յերկճակատ պայքարում, քանակապես աճեց
մեր կուսակցութիւնը և նրան աշխատավորների ամե-
նալայն մասսաներին կապող ոժանդակ փոկերը, արհ-
միութիւնները, կոմյերիտմիութիւնը, խորհուրդները,
պատգամավորական ժողովները՝ աճեց և բարձրացավ
կուսակցութեան հեղինակութիւնը:

Ահա ընդհանուր գծերով այն պարագաները և

այն հաջողութիւնները, վորոնցով մենք տասնվեցե-
րորդ համագումարն յեկանք:

Մեր աճումը, խորհուրդների չերկրի տնտեսական
և քաղաքական հզորութեան ամրացումը ամրապնդում է
համաշխարհային հեղափոխութեան բազան: Կապիտա-
լիստական և գաղութային չերկրների բանվոր դասա-
կարգի և աշխատավորների համակրանքն աճում է դե-
պի ՅՍՀՄ, ամբանում են միջազգային պրոլետարական
շարժման դիրքերը:

Տասնչորսերորդ համագումարն ինդուստրացման
համագումար էր, մի համագումար՝ վորը նշեց խորհրդ-
դային տնտեսութեան ինդուստրացման, դյուղատնտե-
սական չերկրը խոշոր ինդուստրիալ չերկրի վերա-
ծելու—լայն ուղին, մի համագումար, վոր որակարգի լո-
զունգ հայտարարեց հասնել և գերազանցել կապիտա-
լիստական առաջնակարգ չերկրներին:

Տասնհինգերորդ համագումարը մի համագումար
էր, վոր նշեց դյուղատնտեսութեան սոցիալիստական
արմատական վերափոխութեան անելիքները, վոր նշեց
կոլտնտեսական շարժման մասսայական զարգացման
լայն ուղին (столбовая дорога):

Տասնվեցերորդ համագումարը սոցիալիստական
շինարարութեան ամբողջ ֆրոնտով չերկրի կապիտա-
լիստական տարրերի դեմ հարձակման դիմելու, կա-
պիտալիզմի արմատները հիմնահան անելու—կուլա-
կութիւնը, վորպես դասակարգ վերացնելու համագու-
մարն է:

Տասնվեցերորդ համագումարը հանրագումարի բե-
րեց կուսակցութեան աշխատանքի ամենահարուստ,
մարտական այն փորձը, վոր կուտակել էր նա չերկու

և կես տարվա ընթացքում XV մինչև XVI համագումարը: Այդ ժամանակաշրջանի փորձը՝ բնակարար, կապված է բոլոր նախընթաց տարիների փորձի և նվաճումների հետ:

Հենվելով այդ փորձի յեվ կենինի ուսման վրա, կարողանալով կիրարկել այն ներկա, կոնկրետ պարագաներում, համագումարը հանեց իր պատմական վարժողմաները, վերոնք սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում հետագա առաջխաղացման յեվ յերկրում կապիտալիզմի արժատները հիմնահան անելու մարտական ծավալուն ծրագիրն են հանդիսանում:

II

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՀԱՍ. ԿԿ (Բ) XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՈՒՄ

Տասնվեցերորդ համագումարը սպառնիչ գնահատական է տվել կապիտալիստական աշխարհի դրությանը—նրա տնտեսական և քաղաքական վիճակին:

Տասնհինգերորդ համագումարը սրանից յերկու և կես տարի առաջ, չնայելով կապիտալիստական զրեթե բոլոր յերկրներին, մանավանդ Ամերիկայի, արդյունաբերության, առևտրի, հումքի բաղայի աճմանը, ճշտորեն նախագուշակեց այդ՝ այսպես կոչված, ստաբիլիզացիայի ժամանակավորությանը, կապիտալիզմի ամրացման ժամանակաշրջանը, կապիտալիզմի ամրացման ժամանակավոր բնույթը:

Տասնհինգերորդ համագումարը ընկեր Ստալինի խոսքերով գուշակել էր կապիտալիստական աշխարհի մասին. «Ահում—ծառանում է համաշխարհային կա-

պիտալիզմի ամենախոր յեվ ամենաարագ ճգնաժամը, վորը հղի յե նոր պատերազմներով յեվ սպառնում է ամեն կարգի ստաբիլիզացիայի գոյությունը»:

Կյանքն անհերքելի հավաստիությանը ապացուցեց բալլեիկյան համագումարի գնահատականի ճշտությանը և դաժանորեն հեգնելով բուրժուական գիտնականներին, յերկրորդ ինտերնացիոնալի բանակի գիտնականներին, վորոնք քրտինք մտած ապացուցում են, թե կապիտալիզմը կայուն է, անսասան, նա կշարունակի ծաղկել և զարգանալ:

Կյանքը դաժանորեն հեգնեց նաև ալ սպորտուշիստներին՝ «կազմակերպված կապիտալիզմի» իրենց թեորիայով հանդերձ. «Կոմինտերնում աջ տարրերը հակադրեցին իրենց գիծը: Աջերն աշխատում եյին կոծկել հակասությունները, այսինքն՝ նրանք վերջիվերջ իրենց բռնած դիրքով ժխտում եյին կապիտալիստական ստաբիլիզացիայի խախտման անխուսափելիությունը տվյալ պայմաններում» (Մոլոտով XVI համագումարում տված զեկուցումից):

Ընդդեմ թե մեկի և թե մյուսի, անցքերի ընթացքն այնպես է զարգանում, ինչպես գուշակել էր կուսակցության XV համագումարը:

Մենք կապիտալիզմի խոր և տեական ճգնաժամի վկաններն ենք հանդիսանում: Բոլոր յերկրները՝ Ամերիկայից սկսած, ճգնաժամով են բռնված:

Ճգնաժամը սրեց կապիտալիզմի բնությանը հատուկ բոլոր հակասությունները:

Հիմնականն այստեղ ապրանքների գերադատադրությունն է, վորը կապիտալիստական տնտեսության անպլանայնության և խառնաշփոթության հետևանքն է հանդիսանում:

Այստեղից ել առաջ ե գալիս արտադրութեան կրճատումը:

1930 թվականի առաջին յեռամսյակը՝ անցյալ տարվա առաջին յեռամսյակի համեմատութեամբ, ցույց ե տալիս, թե արտադրութեանը Գերմանիայում կըրճատվել ե 11 տոկոսով, Լեհաստանում՝ 16,7 տոկոսով ե այլն:

Կրճատվել ե նաև ապրանքների արտահանութեանը, վորը կապիտալիզմի դրութեան ցուցանիշն ե հանդիսանում միշտ: 48 կապիտալիստական յերկրներում 1930 թվականի յերեք ամիսների ընթացքում արտաքին առևտուրն անցյալ տարվա նույն ամիսների համեմատութեամբ պակասել ե 9,6 տոկոսով:

Արդյունաբերութեան ճգնաժամը զուգահեռաբար ե գյուղատնտեսութեան ճգնաժամին: «Գյուղատնտեսութեան ճգնաժամն այն աստիճանին ե հասել, վոր բարձր գները ե բուրժուազիայի վաստակը պահպանելու համար՝ Բրազիլիայում 2 միլիոն պարկ սուրճ ծոփն են նետել, Ամերիկայում ածուխի փոխարեն՝ սկսել են յեզիպտացորեն վառել, Գերմանիայում միլիոնավոր հաճար վեր են ածել կերի՝ խոզերի համար, իսկ բամբակի ե ցորենի վերաբերութեամբ ամեն միջոց ձեռք են առնում, վորպեսզի ցանքերի տարածութեանը կըրճատեն 10—15 տոկոսով»: (Որինակները բերված են ընկեր Ստալինի զեկուցումից XVI համագումարում):

Ճգնաժամի դելաբանը սղմված բուրժուազիան յեւթ ե վորոնում: Այս կապակցութեամբ՝ սրվում ե կապիտալիստական կարևորագույն յերկրների հակամարտութեանը, սպառման շուկաներին, հումքի աղբյուրներին տիրանալու պայքարը:

Սրա հետ միասին՝ սրվում են հակամարտութեանները հաղթած (Անգլիա, Ֆրանսիա) ե պարտված (Գերմանիա) յերկրների միջև:

Հակամարտութեանները սրվում են նաև իմպերիալիստական յերկրների ե գաղութների միջև: Չէ վոր պատահական բան չե, վոր կապիտալիստական յերկրների բուրժուազիան այժմ պատերազմական դրութեան մեջ ե գտնվում «իր» գաղութների հետ—Հնդկաստանում, Խնդնեզիայում, Հնդկաչինում ե Հյուսիսային Աֆրիկայում:

Ճգնաժամին հետևում ե, խիստ սրվում ե նաև բուրժուազիայի ե պրոլետարիատի հակամարտութեանը:

Բուրժուազիան ճգնաժամից դուրս գալու յեւթ փնտրելով՝ ուժեղացնում ե ճնշումը բանվոր դասակարգի հանդեպ, գործադրիութեանն աճում ե, աշխատավարձն իջնում, վատթարանում ե բանվոր դասակարգի դրութեանը: ՀԱՄՆ գործադուրկների թիվը 6 միլիոնի յե հասել, Իտալիայում, Հարավային Ամերիկայում ե Ճապոնիայում՝ միլիոնի, Լեհաստանում, Հարավ-Սլավիայում, Ավստրիայում՝ 500,000-ական մարդու: Միլիոնավոր ազարակատներ ե աշխատավոր գյուղացիներ սնանկանում են գյուղում:

Պրոլետարիատը կապիտալի հարձակմանը պատասխանում ե գործադուլներով, գործադուրկների յեւթութեանով, քաղաքական ցույցերով, գաղութների աշխատավորների հեղափոխական յեւթութեանով: Միջազգային հեղափոխական շարժումը լայնանում ե աճում ե, իր զարգացման բարձր աստիճանին հասնելով: Աճում ե ամբապնդվում ե կոմունիստական կուսակցութեանների ազդեցութեանը—սրան կնվիրվի հետևյալ յերրորդ գլուխը:

Դանի ավելի յեն սրվում կապիտալիզմի վերոհշ-
յալ բոլոր հակասությունները և մանավանդ դասա-
կարգային հեղափոխական պայքարը, այնքան ավելի
յե ջանք թափում բուրժուազիան՝ ամրանալու իր դիր-
քերում, հենվելով ֆաշիզմի վրա, վորը մի շարք լեր-
կրներում իշխանության գլուխն և անցել, կամ հեն-
վում միջազգային մենշևիկների՝ սոցիալ-դեմոկրատների,
սոցիալ-ֆաշիստների վրա:

Այդ արժանի անունը նրանք վաստակեցին՝ բուր-
ժուազիային նվիրված լինելու և բանվոր դասակար-
գին ամեն հարմար առիթով դավաճանելու պատճառով:

Սոցիալ դեմոկրատների դավաճանական, ֆաշիստա-
կան դերը պատկաթափ և անում նրանց՝ բանվոր դասա-
կարգի աչքում: Ընկեր Ստալինը այդ առթիվ XVI
համագումարում ասաց. «Այս կապակցությամբ փը-
լում յեվ ընկնում են դեմոկրատական պատրանքները
բանվորական մասսաների մեջ: Գործադուլներ վի-
ժեցնող, լուկաուոններ կազմակերպող, բանվորներին
գնդակահարող սոցիալ-դեմոկրատների իշխանության
գլուխ անցնելու փորձից հետո—վորպես դառն հեզ-
նանք են հնչում բանվորների ականջին «արտադրո-
ղական դեմոկրատիայի», «արդյունաբերական խաղա-
ղության» յեվ «պայքարի» խաղաղ մեթոդների ստա-
նող խոստումները: Այժմ շատ բանվորներ կլսեն
արդյոք, վորոնք ընդունակ լինին հավատալու սոցիալ-
ֆաշիստների կեղծ քարոզին: 1929 թվականի ոգոս-
տոսի մեկի բանվորական հայտնի ցույցերը՝ պատե-
րազմի վտանգի դեմ, 1930 թվականի մարտի 6 ցույ-
ցերը, գործադրության դեմ, ցույց են տալիս, թե
բանվոր դասակարգի լավագույն մարդիկ արդեն յերես

են դարձել սոցիալ ֆաշիստներից: Տեսնական երգ-
նաժամը նոր հարված կհասցնի սոցիալ-դեմոկրատ-
կան պատրանքներին բանվորների մեջ:

Յեվ վերջապես ելի մի չափադանց կարևոր և
վճռական հակասություն—այդ՝ ԽՍՀՄ և կապիտալիս-
տական աշխարհի միջև յնդած հակասությունն է:

Տասներեք տարի ամբողջ աշխարհի աչքի առաջ
գոյություն ունեն յերկու իրար ներհակ սխտեմներ—
հզնաժամի բորոտությունների մեջ զառամող կապի-
տալիստականը և աճող, ամբողջող և ամբողջ աշխարհի
պրոլետարիատի և ճնշված մարդկության ուշադրու-
թյունն ու համակրանքն իր վրա բևեռող սոցիալիս-
տականը: ԽՍՀՄ-ն համաշխարհային հեղափոխության
բազան է: Ահա թե ինչու նա ատելի յե կապիտալիզ-
մին:

Ամենքը հիշում են կապիտալիստ պարոնների
պարտությամբ վերջացած պրովոկացիոն հարձակում-
ները ԽՍՀՄ վրա, Զին-Արևելյան-յերկաթուղու բռնու-
ղբափումը, չինական միլիտարիստների կողմից, Հոտմի
պապի և ամբողջ յեկեղեցու «արշավը», ոտարյերկրա-
ցիների ձեռքով կազմակերպված վնասարարությունը
ԽՍՀՄ ներսում:

Կապիտալիստական աշխարհը տենդորեն նոր պա-
տերաղմներ և պատրաստում, իր թնդանդիների փո-
ղերն ուղղելով ԽՍՀՄ դեմ:

Գուսակցությունը և նրա կի վարում ելին խա-
ղաղության միակ ճիշտ, պրոլետարիատն քաղաքակա-
նությունը: Սակայն մեզ վրա հարձակվելու դեպքում
ԽՍՀՄ աշխատավորները՝ իրենց կուսակցության գլու-
խավորությամբ, կկարողանան հակահարված տալ, ինչ

վոր արդեն ասպարեցված է Զին-Արեւելյան յերկաթուղու կոնֆլիկտի դեպքով:

Տասնվեցերորդ համագումարն ամբողջութեամբ և լիովին հաժանութուն տվեց ԿԿ արտաքին քաղաքականութեան, իր բանաձևի մեջ մատնանշելով, վոր ԽՍՀՄ միջազգային հզորութեան ամրապնդումը հետեւեալն է և՛ ԿԿ (Բ) ԿԿ վարած արտաքին ճիշտ քաղաքականութեան: Միայն այդ քաղաքականութեան շնորհիւ խորհրդային իշխանութիւնը պահպանեց խաղաղութիւնը, վերը սոցիալիստական հաղթական շինարարութեան «ԽՍՀՄ միջազգային հեղինակութեան նշանակալից ամրապնդման ամենակարեւոր պայմանն է հանդիսանում: Խորհրդային կառավարութեան փորձված և անհողող քաղաքականութեան հետեւնեւով վերականգնվեցին դիմանադիտական հարաբերութիւններն Անգլիայի հետ յեւ լուծարքի յենթարկվեց Զին-Արեւելյան յերկաթուղու կոնֆլիկտը, վոր միջազգային իմպերիալիզմն եր փաթաթել մեր վզին:

Համագումարը հանձնարարում է ԿԿ առաջիկայումն ել խաղաղութեան յեւ ԽՍՀՄ բանվորների ու աշխատավորական մասսաների յեւ կապիտալիստական յերկրների ու գաղութների բանվորների յեւ աշխատավորների յեղբայրական կապերն ու համերաշխութիւնն ամրապնդելու հաստատուն յեւ վճռական քաղաքականութիւնը վարել:

Գոհունակութեամբ նշելով, վոր մեր Կարմիր բանակը նորից ցույց տվեց իր ուժն ու մարտունակութիւնը, համագումարը վճռականորեն մատնանշում է, կուսակցութեան ամբողջ ուշադրութեան կենտրոնացման յեւ բանվոր դասակարգի յեւ գյուղացիութեան

չբավոր միջակային մասսաների բոլոր ուժերն զորահավաքի յենթարկելու անհրաժեշտութեան վրա ԽՍՀՄ պաշտպանունակութեան, Կարմիր բանակի, ծովային յեւ ողային նավատորմի հզորութիւնն ու մարտունակութիւնն ամրացնելու համար» (համագումարի վորոշումները):

Ամեն ինչ վկայում է, վոր կապիտալիզմի ճգնաժամը պետք է խորանա, վոր կապիտալիզմի ստաբիլիզացիայի վախճանը մոտենում է:

Կապիտալիզմը թեւկոխեց իրեն հառուկ բոլոր հակասութիւններն ամենախիստ սրման շրջանը, վորը արագացնում է նրա պատմական վախճանը, սրում է դասակարգային սպառնալիքը, ծավալում հեղափոխական շարժումն ամբողջ աշխարհում:

Ահում է կոմունիստական կուսակցութիւններն և կոմիւնտերնի ազդեցութիւնն ու հեղինակութիւնը, վորն ամբողջ աշխարհի պրոլետարիատին և աշխատավորներին կառաջնորդի դեպի համաշխարհային Հոկտեմբերի բարրիկադները:

III

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ինչպէս արդեն ասված է նախորդ «Կապիտալիստական աշխարհը ՀամԿԿ(Բ) XVI համագումարի գընահատականում» գլխում, առկա յե հեղափոխական շարժման նոր, հզոր վերելքը:

Հեղափոխական շարժման նոր վերելքի աճումը համաչափ չի ընթանում. ամեն մի յերկրում նա միակերպ տեմպերով չի զարգանում և զանազան ձևեր է ընդու-

նում, անմիջական կախում ունենալով յերկրի ընդհանուր տնտեսական և քաղաքական դրուժյունից:

Վոր պրոլետարական հեղափոխական շարժումն ածրող աշխարհում թևակոխել և հզոր վերելքի շրջանը, վոր բանվոր դասակարգի ձախացումն արագ քայլերով և ընթանում, այդ բանը հաստատում են մի շարք գործադուլներ, քաղաքական ցույցեր, վորոնց ընթացակից են ընդհարումները վոստիկանության հետ և արբենհոլությունները մի շարք տեղերում:

Ճրանսիան՝ որինակ, 1928 թվականին 222 հազար գործադուլովոր և ունեցել, 1929 թ.՝ արդեն 470 հազար, Անգլիան 1928 թ.— 134 հազար, 1929 թ.— 582 հազար, Չինաստանում 1928 թվականին գործադուլ և արել 400 հազար հոգի, իսկ 1929 թ.՝ 750 հազար հոգի: Ըստ վոր լրիվ տվյալների՝ միայն Գերմանիայում, ընթացիկ տարվա առաջին հինգ ամսում վոստիկանության հետ ընդհարվելիս սպանվել են 60-ի չափ բանվոր, վիրավորվել՝ 1.163 մարդ և ձերբակալվել՝ յերկու և կես հազարից ավելի:

Ամենքն են հիշում մայիսմեկյան համատարած հրդուր ցույցերը, ոգոստոսի 1-ի միջադեպին ցույցերն՝ իմպերիալիստական պատերազմի դեմ և մարտի 6-ի ցույցերը՝ գործադրկության դեմ:

Վերջին ժամանակներս լայն թափ առավ գործադրկության շարժումը:

Մի շարք յերկրներում հեղափոխական շարժման մեջ են մտնում նաև գյուղի չքավորները, ընչպես նաև Լեհաստանի, Ռումինիայի, Հունաստանի և մասամբ Ճրանսիայի գյուղի չքավորները:

Սրան գուղընթաց ածում և լայն ծավալ և առնում


դադութային ճնշված ժողովուրդների հեղափոխական շարժումը: Ծավալվում և խորանում և հեղափոխությունը Զինաստանում, վորպես բանվորների, դյուղացիների և քաղաքային չքավորների հեղափոխություն՝ խորհուրդների դրոշի տակ և բանվոր դասակարգի ղեկավարութամբ: Վերջին ժամանակներս, աղքատ-հեղափոխական շարժման նոր օլիքը բարձրացավ Հնդկաստանում: Վերջապես հիշենք Հնդկա-Չինի, Կոնգոյի, Ճիլիպույան կղզիների Պաղեստինի և այլ տեղերի աշխատավորների հեղափոխական պայքարի փաստերը: Գաղութների աղքատ-հեղափոխական շարժումը ներսից հյուժում, քայքայում և իմպերիալիզմի հիմքերը:

Համառոտագիտական կուսակցություններից այժմ — առում և ընկեր Մոլոտովը — առանձնապես պահանջվում և ապացուցել, թե իրենք ընդունակ են բանվոր դասակարգի պայքարը ղեկավարելու ընդդեմ հարձակվող կապիտալիստ:

Յեվ մի շարք տեղերում կոմունիստական կուսակցություններն են գլխավորում այդ շարժումը: Կոմունիստների հեղինակութունն աճում և բանվոր դասակարգի լայն մաստանքի մեջ:

Սակայն, չէի կարելի չհոստովանել, — առում և ընկ. Մոլոտովը XVI համագումարին տված իր ղեկուցման մեջ — թե այդ պայքարի ղեկավարության գործում յեղբայրական կոմկուսակցությունների աշխատանքի մեջ խոշոր թերություններ և թուլություններ են հայտնաբերվում մի առանձին պարզությամբ:

Դրա հետ միասին, միայն կապիտալիզմի հարձակման դեմ բանվորների մղած այդ պայքարում կոմունիստական կուսակցությունները կարող են իսկապես



12142-57

ամբացնել իրենց դիրքերը, բանվորական մասսաների միջազայրում կարող են ղեկավար դեր զբաղել բանվոր դասակարգի մեջ, կարող են հաջողութուններ հեռք բերել բանվոր դասակարգի մեծամասնութիւնը՝ կոմունիստիկ կողմը դրավելու գործում: Ուստի, այժմ քան յերբեք, անհրաժեշտ է ուղարկութիւնը կենտրոնացնել ֆարքիկաների և գործարանների բանվորների մեջը տարվող աշխատանքի վրա:

Կոմունիստական կուսակցութիւնների մեծ մասի մեջ նեղ տեղը կազմակերպչական աշխատանքն է հանդիսանում: Առկա չէ հալտնի «մկրատը»: Դասակարգային կոիքների արմատը, հեղափոխական շարժման վերելքին զուգընթաց՝ աճում է կուսակցութեան ազդեցութիւնն ու հեղինակութիւնը: Միուս կողմից՝ անշարժ դրութիւնն է նկատվել կոմունիստական կուսակցութիւնների աճման մեջ: Կազմակերպչական աշխատանքը յետ է մնում դասակարգային պայքարի տեմպերից: Կուսակցութիւնների քաղաքական ազդեցութիւնը չի ամրապնդվում բանվորներին կուսակցական կազմակերպութիւնների կողմից ընդգրկելու ճանապարհով: Դրա գլխավոր պատճառն այն է, վոր դեռ վոչ բոլոր կազմակերպութիւնները վերակազմվել են արտադրական հատկանիշով — ֆարքիկաներում և գործարաններում բջիջներ ստեղծելու հատկանիշով, թույլ են մասսայական աշխատանքները, աշխատանքները՝ արհմիութիւնների մեջ:

Կոմունիստական ինտերնացիոնալն իր ամբողջութեամբ յետ ամեն մի կոմունիստական կուսակցութիւն՝ ՀամԿԿ(ք) ակտիվ մասնակցութեամբ իրենց շարքերում մեծ պայքար տարան օպորտյունիզմի դեմ,

պայքար՝ յերկու ճակատով: Յերկու ճակատում պայքարելով՝ Կոմինտերնը կրակը կենտրոնացնում էր աջ մասի ճակատի վրա — աջ զլխավոր վտանգի վրա:

Կոմինտերնը՝ ՀամԿԿ(ք) ակտիվ մասնակցութեամբ, ժամանակին հաշվի առնելով դասակարգային ուժերի վերախմբավորումը, վոր հետեանք էր դասակարգային հակասութիւնների սրման, հաշվի առնելով պրոլետարական մասսաների ակտիվութեան աճումը, անշեղորեն՝ տանում էր դասակարգը՝ դասակարգի դեմ տակտիկան, պրոլետարիատի դասակարգային կոիքներին ինքնուրույնաբար ղեկավարելու տակտիկան:

Այս բոլորն հաջողութեամբ կարելի յեր իրագործել միայն ֆաշիստացող սոցիալ-դեմոկրատիայի դեմ անհալտ պայքար մղելու պայմանով, նրա ելութիւնը մերկացնելու պայմանով:

Այդ անցած շրջաններում ամբացան կարմիր արհմիութիւնների կազմակերպութիւնները: Սակայն մեր լեղրալրական արհմիութեանական կազմակերպութիւնները տառապում են դեռ մի շարք ելական թերութիւններից:

Հեղափոխական վերելքի, պրոլետարիատի պայքարի մասին խոսելիս, չի կարելի լուութիւն պահել Յերիսասարգութեան Կոմունիստական Ինտերնացիոնալի մասին:

Յերիսասարգութեան համար մղվող պայքարը սրվեց այնպես, ինչպես յերբեք:

Բուրժուադեան շատ լավ հասկանալով չերիտասարգութիւնը իր կողմը դրավելու նշանակութիւնը, ջանք ու միջոց չի խնայում աշխատանք տանելու չերիտասարգութեան մեջ:

Կիմը մի շարք անվիճելի նվաճումներ ունի, և Կոմիտեներն մտադրական շոկատներից մեկն է հանդիսանում:

Սակայն, ԿիՄ-ի սեկցիաները, յերկրներ մեծ մասի կոմսոմոնները ելական պակասություններ ունեն իրենց աշխատանքի մեջ: Իրանցից գլխավորներն են՝ աճման դանդաղությունը, վորը ցույց է տալիս, թե քաղաքական ազդեցությունը կազմակերպչորեն ամրացնելու աշխատանքն անգամալարար է, թույլ է մատակարար աշխատանքը և այլն: Յեւ այն ժամանակ, յերբ կապիտալիստական առաջնակարգ յերկրներում մեր հակաակորդներն իրենց պատմական կազմակերպությունների ցանցի մեջն են առնում յիբրտասարգություն 40-50 0/0-ը:

Դեռ ԿիՄ-ի V կոնգրեսը խնդիրն իր ամբողջությամբ դրեց, թե պետք է շրջադարձ կատարել գեպի մասայական աշխատանքը, պետք է կոմյեբիտական մասսայական կազմակերպություններ ստեղծել:

ԿիՄ-ը, վոր կարողացել է Կոմիտեների գործերի տակ և նրանց ղեկավարությունը, անհաշտ պայքար մղել յերկու ճակատով, վոր աշխատավոր չեքիտառարդություն ղեկավարի դերում մասնակցում է հեղափոխական կռիւներին, անշուշտ կկորոդանա դուրս բերել իր առջև ծառացած մեծ խնդիրները: «ԿիՄ-ն առաջիկայումս ել արժանապես կընթանա Կոմսոմոնիստական Խոտերնացոնայի առաջնադաս գործայուններում»:

Համ. Կի (բ) տասնվեցերորդ համագումարը, Կոմիտեների ամենամեծ սեկցիայի աչդ համագումարը, մի սեկցիայի՝ վոր պայքարի և ստեղծագործական աշխատանքի հարուստ գործով և ուժոված, վոր իրավամբ ղեկավար դեր է գրավում, նշեց հետագա աշխատանքի

հանգուցային խնդիրները, հետագայի տակտիկան, հանձնարարելով իր պատվիրակներին Կոմիտեներն Իործկումում իրագործել դրանց:

Համագումարն անհրաժեշտ համարեց Կոմիտեների և նրա սեկցիայի ուշադրությունը լարել սոցիալ-ֆալիզմի դեմ պայքարն ուժեղացնելու վրա, սոցիալ-ֆալիզմի՝ վոր քնեցնում է բանվոր դասակարգի դասակարգային արթնությունը:

Համագումարն առանձնապես ընդգծեց, թե Կոմիտեների սեկցիաները կազմակերպչորեն յետ են մնում նրանց գաղափարական—քաղաքական աճող ազդեցությունից և թե անհրաժեշտ է հաղթանարել կազմակերպչական աչդ յետամնացությունը՝ կուս. աշխատանքի ծանրությունը կենտրոնը ձեռնարկությունները փոխադրելու, աշխատանքը և Ֆրակցիաների կուսակցական ղեկավարությունը մասսայական կազմակերպությունների, մասնավոր առնմիությունների մեջ ուժեղացնելու ճանապարհով, բանվորների գործադուլային շարժումն ինքնուրույնացած, սիստեմատիկորեն կազմակերպելու և ղեկավարելու ճանապարհով, միասնական ճակատը ներքևից բայլելիկորեն վարելու տակտիկայի հիման վրա:

ՀԱՄ. Կի (բ) տասնվեցերորդ համագումարը կոչ արեց Կոմիտեների բոլոր սեկցիաներին այսուհետև ել ամենաանխնա պայքար մղել յերկու ճակատով՝ ուղորտյունիզմի դեմ, վորը գործնականում «ամենից հաճախ արտահայտվում է նրանով, վոր դասակարգը՝ դասակարգի դեմ հեղափոխական տակտիկան գործնականորեն չի վարում, սոցիալ—դեմոկրատիայի հետ համաձայնություն մեջ է մտնում և իր քաղաքականությունը ղեկավարում արմիությունական լեգալիզմին և

յնթարկում, հրաժարվում ե նաև սև, համառ աշխատանքից և մասսաների համար մղվող առողջագայքաբերից, վաղ սքողվում ե Շախս լեզվազարությամբ:

Տասնվեցերորդ համագումարը՝ տեղի ունենալով հեղափոխական նոր ալիքի վերելքի պատմական մոմենտում, պարզ ցուցումներ տվեց թե Կոմինտերնի հետագա աշխատանքում, պետք ե բայլելիկացնել նրա շարքերը:

Այս միջոցների իսկական գործադրությունն ապահովելով միայն՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիաները կազմակերպչորեն կամրապնդեն մասսաների մեջ իրենց ազդեցությունը, վորն ահում ե բանվորական հեղափոխական շարժման վերելքի կապակցությամբ:

«Միայն Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիաների զաղափարական և կազմակերպչական ամրացումը՝ ՀԱՄ ԿԿ (բ) լենինյան ղեկավարության անժխտելի հեղինակության առմանը զուգընթաց, ել ավելի կապահովի Կոմինտերնի առանձին սեկցիաների միաձուլությունը համաշխարային Կոմունիստական միասնական կուսակցության մեջ, Կոմունիստական Ինտերնացիոնալի միասնական ծրագրի հիման վրա, վորը հզոր զենքն ե հանդիսանում պրոլետարական համաշխարհային հեղափոխության համար մղվող պայքարում:

IV

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՊՈՂՊԱՏԵ ՌԵԼՍԵՐԻ ՎՐԱ

Բայլելիկների կուսակցությունը իր տասնվեցերորդ համագումարում նշել ե ԽՍՀՄ ինդուստրացման ուղիները, խորհուրդների գյուղատնտեսական յերկիրը

վերածելու մի յերկրի, վորտեղ գերիշխողը խոշոր արդյունաբերությունը լինի:

«Բնութաններն ամրացնելու, սոցիալիստական հասարակություն ստեղծելու համար՝ իսկական ե միակ և միայն միակ բազան հանդիսանում ե խոշոր արդյունաբերությունը» (ԼԵՆԻՆ):

Լենինի այս ցուցմանը հետևելով, կուսակցությունը յերկրում յեղած և պատերազմներով քարուքանդ յեղած արդյունաբերությունը վերականգնելով, հասցնելով մինչպատերազմյան մակարդակին, խնդիր դրեց վերակառուցել ժողովրդական ամբողջ տնտեսությունը և՛ առաջին հերթին, արդյունաբերության զարգացումը՝ ամենաառաջնակարգ, կատարելագործված տեխնիկական բազայի հիման վրա: Խնդիր եր դրված ծավալել խոշոր արդյունաբերության շինարարությունը, արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության շինարարությունը—մեքենաշինարարությունը:

Պետք եր գինեկ յերկիրն իր մեքենա-շինարարական գործարաններով, մշակության յենթարկելով մեր հանքի, ածուխի և նավթի հարուստ աղբյուրները:

Կուսակցությունը լողունգ հայտարարեց՝ «հասնել և անցնել կապիտալիստական յերկրներից տեխնիկատնտեսական բնագավառում»:

Ամենայն հավանականությամբ դեռ յերկար ժամանակ խորհուրդների յերկիրը կապիտալիստական յերկրների ողակումը կլինի, անհրաժեշտ ե վոր նա այնպիսի տնտեսություն ստեղծեր, վոր կարողանար ապահովել սոցիալիզմի կառուցումը մեկ յերկրում և ապահովեր տնտեսական լիակատար անկախությունը կապիտալիստական աշխարհից:

«Պետք է ապահովել ԽՍՀՄ տնտեսական ինքնու-
րոնությունը, վոր ապահովում է ԽՍՀՄ համաշխար-
հային կապիտալիստական տնտեսության վրադիրը
դառնալուց, ուստի պետք է յերկրի ինդուստրացման
արտադրություն, արտադրության միջոցների զարգաց-
ման ուղին բռնել...» (XIV համագումարի վորոշում-
ներից):

Վ. Ի. Լինինի և Կուսակցության համագումարի
ցուցմունքներն իրենց լիակատար արտահայտությունը
գտան մեծ աշխատանքների պլանում—հնգամյակում:

Ժողովրդական տնտեսության զարգացման հնգա-
մյա պլանը, վորի իրագործումով արդեն յերկու տարի
զբաղված է յերկրը, իրոք վոր կատարվի այդ ցուց-
մունքներն իրագործելու բոլոր նախադրյալները:

Բուրժուական աշխարհի ալևոր գիտնականներն
անվստիսելի են դիմավորեցին հնգամյակին, համարելով
այն, վորպես բայլելիկների մի «հերթական ֆանտա-
զիա»: Նրանցից մեկը՝ գերմանական տնտեսագետ Կրե-
մերն իր մի ճառում հնգամյակի մասին ասաց. «Յեթե
հնգամյա պլանը կարելի լիներ կատարել նույնիսկ 50
տարում, այդ դեպքումն էլ դա մի հսկայական գործ
կլիներ: Սակայն դա ցնորք է»:

Հնգամյակը հինգ տարում իրագործելու չհավա-
տացողներ շատ կային նաև ԽՍՀՄ-ում: Յեվ վերջապես
աջերը վախենալով հնգամյակին իրագործելու բայլելիկ-
յան տեմպերից, սկսեցին սարսափահար ճշտել, «Տեսե՛ք,
դրանից մի բան դուքս չգտնե՛ք»:

Ցասնվեցերորդ համագումարը տեղի ունեցավ
հնգամյակի յերկրորդ տարվա վերջի նախորդակին և
կարողացավ ինդուստրացման հանրագումարը բերել:

Ինչպիսիք գտնակարգի աննախնայ անհղձաքոր-
ծական ենտեղեկություն, սոցիալիստական մրցման ու հա-
վածայնության ծավալման և յերկրի բոլոր ուժերի և
միջոցների լարման հետևանքով, հաջողվեց սոցիալիս-
տական շինարարության չտանված տեմպեր նվաճել:

Այդ տեմպերի ամենացատուն արտահայտությունը
հանդիսացավ «Հնգամյակը՝ շորս տարում» լոգունգը:
Իսկ առանձին ճյուղերում հնգամյակի կատարումը հնա-
րավոր է նաև ալելի կարճ ժամանակում: Նավթային
գործի հնգամյակն՝ որինսկ, կկատարվի յերկու և կես
տարում:

Մեծ աշխատանքների պլանն արդեն մեծ շինա-
րարության տիպարների յե վերածվում:

Ընկեր Կուլբիշևը—արդյունաբերության հնգամյա
պլանի կատարման մասին զեկուցողը տասնվեցերորդ
համագումարում հնգամյակի անդրանիկ կառուցումների
յերկար ցուցակը բերեց:

Նրա խոսքերը հնչում էին վորպես Կուսակցության
գերագույն որդանին մատուցող բապորտ՝ սոցիալիստա-
կան շինարարության ճակատից:

«Ամենից առաջ յես կկամենայի նշել, վոր մենք
այժմ արդեն մի շարք խոշորագույն ձեռնարկություն-
ներ ունենք, վորոնք իրենց տեխնիկական մակարդակով
սկսում են մրցել արեվմտա-յեվրոպական և ամե-
րիկյան արդյունաբերության լավագույն տիպարների
հետ: Դրանց մեջն են մտնում այնպիսի ձեռնարկու-
թյուններ, ինչպիսիք են՝ Ստալինգրադի տրակտորի գոր-
ծարանը, վոր բան է դրվել համագումարի ժամանակ,
«Կրասնիյ Պուտիլովցի» ձուլարանի դարբնոցը, վոր
յետ չի մնում ամերիկյան լավ տիպերից, Ռաստովի

«Պետք է ապահովել իՍՂՄ տնտեսական ինքնուրունությունը, վոր ապահովում է իՍՂՄ համաշխարհային կապիտալիստական տնտեսության վրադիրը դառնալուց, ուստի պետք է յերկրի ինդուստրացման արտադրության, արտադրության միջոցների զարգացման ուղին բռնել...» (XIV համագումարի վորոշումներից):

Վ. Ի. Լենինի և կուսակցության համագումարի ցուցմունքներն իրենց լիակատար արտահայտությունը գտան մեծ աշխատանքների պլանում—հնգամյակում:

Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը, վորի իրագործումով արդեն յերկու տարի զբաղված է յերկիրը, իրոք վոր կատեղծի այդ ցուցմունքներն իրագործելու բոլոր նախադրյալները:

Բուրժուական աշխարհի ալետր դիտնականներն անվստիճյամբ դիմավորեցին հնգամյակին, համարելով այն, վորպես բայլչնիկների մի «հերթական ֆանտազիա»: Նրանցից մեկը՝ գերմանական տնտեսագետ Կրեմերն իր մի ճառում հնգամյակի մասին ասաց. «Յեթե հնգամյա պլանը կարելի լիներ կատարել նույնիսկ 50 տարում, այդ գեպքումն ել դա մի հակայական գործ կլիներ: Սակայն դա ցնորք է»:

Հնգամյակը հինգ տարում իրագործելու չհավատացողներ շատ կային նաև իՍՂՄ-ում: Յե՛վ վերջապես աշերը վախենալով հնգամյակն իրագործելու բայլչնիկյան տեմպերից, սկսեցին սարսավահար ճշտել. «Տեսե՛ք, դրանից մի բան դուքս չգտնե՛ք»:

Տասնվեցերորդ համագումարը տեղի ունեցավ հնգամյակի յերկրորդ տարվա վերջի նախորդակին և կարողացավ ինդուստրացման հանրագումարը բերել:

Ինչվոր գասակարգի աննախնիաց ստեղծագործական ենտեղիւթմի, սոցիալիստական մրցման ու հարվածայնության ծավալման և յերկրի բոլոր ուժերի և միջոցների լարման հետևանքով, հաջողվեց սոցիալիստական շինարարության չտեսնված տեմպեր նվաճել:

Այդ տեմպերի ամենացատուն արտահայտությունը հանդիսացավ «Հնգամյակը՝ շորս տարում» լոզունգը: Իսկ առանձին ճյուղերում հնգամյակի կատարումը հնարավոր է նաև ավելի կարճ ժամանակում: Նավթային գործի հնգամյակն՝ որինակ, կկատարվի յերկու և կես տարում:

Մեծ աշխատանքների պլանն արդեն մեծ շինարարության տիպարների յե վերածվում:

Ընկեր Գուլբիշը—արդյունաբերության հնգամյա պլանի կատարման մասին զեկուցողը տասնվեցերորդ համագումարում հնգամյակի անդրանիկ կառուցումների յերկար ցուցակը բերեց:

Նրա խոսքերը հնչում էյին վորպես կուսակցության զերագույն որդանին մատուցող բապորտ՝ սոցիալիստական շինարարության ճակատից:

«Ամենից առաջ յես կկամենայի նշել, վոր մենք այժմ արդեն մի շարք խոշորագույն ձեռնարկություններ ունենք, վորոնք իրենց տեխնիկական մակարդակով սկսում են մրցել արեւմտա-յեվրոպական և ամերիկյան արդյունաբերության լավագույն տիպարների հետ: Դրանց մեջն են մտնում այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք են՝ Ստալինգրադի տրակտորի գործարանը, վոր բան է դրվել համագումարի ժամանակ, «Կրասնիյ Պուտիլովցի» ձուլարանի դարբնոցը, վոր յետ չի մնում ամերիկյան լավ տիպերից, Ռաստովի

գյուղատնտեսական մեքենաշինարարություն գործարանը, վոր գերազանցում է այն ամենը, ինչվոր մինչև այժմ յեղել է գյուղատնտեսական մեքենաշինարարության բնագավառում: Նոր «Ելեկտրոսիլա»—հզոր գեներատորների կորպուսը, վորը դեռևս վերջնականապես չի ավարտված, և վորը Արևմուտքի լավագույն ձեռնարկությունների շարքն է մտնելու: Ելեկտրոգործարան Մոսկվայում, Մարիուպոլյան Նովոտրուբնիյ գործարանը, վորը իր արտադրությամբ գերազանցում է համապատասխան բոլոր ձեռնարկություններին: Վալախնինսկի թղթի գործարանը, նավթի վերամշակման գործարան Բագվում և Գրոզնավթի ձեռնարկությունները, փայտի սղոցարար գործարանն Արխանգելսկում, Դուբրովսկիի փայտի սղոցարար գործարանը, մի ամբողջ շարք ելեկտրոկայաններ, ինչպես «Կարմիր Հոկտեմբերը», Իվգրեսը, Շատուրկան և այլն: Բավական կլինի ասել, վոր մինչդեռ 1927-28 թվականին շահագործության մեջ է դրվել նոր շինարարության 59 ոբյեկտ, 156 միլիոն ռուբլու ընդհանուր արժողությունը, ընթացիկ տարում արդեն շահագործության պետք է դրվեն 221 ոբյեկտ, այսինքն՝ գրեթե 10-8 անգամ ավելի, 8,396 միլիոն ռուբլու ընդհանուր արժողությունը: Բայց այս միայն սկիզբն է, սրանք հնգամյակի անդրանիկներն են միայն:

Նշված եր հնգամյակում կապիտալ շինարարության վրա դնել 13,5 միլիարդ ռուբլի, դրանից 78 0/0՝ ծանր արդյունաբերության վրա: Հնգամյակի առաջին յերեք տարում՝ ինչպես այժմ չտեսնված տեմպերի ծավալման կապակցությամբ, պարզվում է, պետք է ներդրվի այդ ժամանակի համար 11 միլիարդ ռուբլի, փոխանակ յենթադրված 6,8 միլիարդ ռուբլու:

Յերկրի ինդուստրացման տեմպերի համար ցուցադրական է խոշոր արդյունաբերության տնդուտ արտադրանքի աճումը:

Յեթե 1926-27 թվականի արտադրանքն ընդունենք 100 0/0, 1927-28 թ. ունենք արդեն 127,40 0/0, 1928—29 թ. — 158,6 0/0, 1929-30 թ. աճումը մինչև 209,8 0/0 յե հասնում:

Ելեկտրոններգիայի արտադրության մեջ մենք նույնպես շատ բարձր տեմպեր ունենք. այստեղ հինգ տարվա ընթացքում (1924 թվականից մինչև 1929) տեմպերը մեծանում են 600 տոկոսով: Այդ նույն ժամանակի ընթացքում ՀԱՄՆ-ն ելեկտրոններգիայի արտադրանքը մեծացրել են միայն 181 տոկոսով, Կանադան՝ 218, Գերմանիան՝ 241, Իտալիան՝ 222 տոկոսով:

Շինարարության տեմպերը հսկայական են, սակայն՝ դրա հետ միասին, չպետք է աչքաթող աճել նաև մեր յետաձևացությունը: Որինակներ բերենք միևնույն բնագավառից—ելեկտրոշինարարությունից:

ԽՍՀՄ ելեկտրոններգիայի արտադրանքը 1929 թվականին 6465 միլիոն կիլովատ ժամ եր կազմում, ՀԱՄՆ—126 միլիարդ, Կանադայում—17,628 միլ. Գերմանիայում 33 միլիարդ: Տարբերությունը հսկայական է:

Հասնել նրանց և անցնել նրանցից կկարողանանք մենք միայն վերցրած տեմպերը պահպանելով:

Մեր յերկրի համար մեծ նշանակություն ունի գյուղատնտեսական մեքենաշինարարությունը: Հստ հնգամյակի՝ գյուղատնտեսական մեքենաշինարարությունը հնգամյակի վերջին տարում, —1932—33 թվականին, պետք է 896 միլիոն ռուբլու արտադրանք տա,

Բայց արդեն 1929-30 թվականին նա 503 միլիոն
ռուբլու ծախսերից հետո, այսինքն 56 տոկ. ավելի
Գյուղատնտեսական մեքենաշինարարության հնգա-
մյա պլանը կատարվելու յե յերեք տարում:

Յեվ այսպես, ինդուստրացման բոլոր վճռակա-
րնագրավաճերում կուսակցության վերցրած բարձ-
ր տեմպերն իրագործվում են և խնդիրը—հնգամյակի
չորս տարում, անսպասանորեն կկատարվի:

Համագումարում աջ ուղորդունիքովի առաջնորդ-
ների յեկույթ տեղի ունեցավ:

Այդ յեկույթները անկեղծ, իրենց սխալներ
բայելիկորեն խոստովանելու բնույթը չունեյին, այլ
ընդհակառակն նրանք իրենց յերկդիմի յեկույթներով
փորձում ելին կոծկել իրենց սխալները:

Տասնվեցերորդ համագումարը հրապարակի վր-
դրեց վճռական պայքարի խնդիրը՝ ընդդեմ ուղորդու-
նիքի, ընդդեմ աջության՝ վորպես գլխավոր վտանգի
և ընդդեմ «ձախ խոստովանների» այդ պայքարը հան-
դիսանում և վորպես համագումարի դրած խնդիրների
ամենակարևոր և անկասկածելի մասը, վորպես նրանց
հաջող կատարման գրավական, վորպես սոցիալիստա-
կան ծավալուն հարձակման պարտադիր պայման:

Համագումարն աջ ուղղիցիայի հայացքներ
անհամատեղելի հայտարարեց Համ. Կ. (ք) պատկա-
նելու հետ:

Սակայն, համագումարը հնարավորություն տվեց
աջերի առաջնորդներին գործնական աշխատանքով
ապացուցել իրենց սխալների խոստովանությունը
և անստան հավատարմությունը՝ կուսակցության յե-
նիցան գլխավոր գծին:

«Համագումարն ամբողջ կուսակցության ուշա-
դրությունն և հրավիրում այն հանգամանքի վրա,
վոր ամեն յերանգի ուղորդունիստներ, մանավանդ
աջերը, նոր մանեվրի յեն դիմում, վորն արտահայտ-
վում և իրենց սխալների ծեղական խոստովանու-
թյամբ յեվ ծեղական համաձայնություն կուսակցու-
թյան գլխավոր գծի հետ, առանց հաստատելու իրենց
խոստովանությունը աշխատանքով յեվ պայքարով
գլխավոր գծի համար, վորը գործնականորեն նշանա-
կում և կուսակցության դեմ բացարձակորեն պայքա-
րելուց անցնել թաղուն պայքարի կամ սպասել ավե-
րի պատեհ մոմենտի վերսկսելու գործը կուսակցու-
թյան վրա:

Կուսակցությունը պետք և պատերազմ հայտա-
րարի այդ տեսակ յերկդիմության յեվ խաբեյության
յեվ պահանջի իրենց սխալները խոստովանող բոլորից
ակտիվ կերպով պաշտպանել կուսակցության գլխա-
վոր գիծը, ապացուցել իրենց խոստովանությունների
անկեղծությունը: Այդ պահանջը չկատարելու դեմ
պետք և ծեղք առնել ամենավճռական կազմակերպ-
չական միջոցներ» (համագումարի վորդուններից):

Սոցիալիստական ծավալուն հարձակման և կու-
սակցությունը վորպես դասակարգ վերացնելու շրջա-
նում, կուսակցության ամենակարևոր խնդիրն և պոյ-
քար մղել յերկու ճակատով. նախ՝ աջերի դեմ, վորպես
գլխավոր վտանգի դեմ, վորովհետև աջերը կուսակցու-
թյան աղետաբեր են հանդիսանում կուսակցության
մեջ, Իրա հետ միասին, պետք և պայքար մղել նաև
«ձախ» խոստովանների և ուղորդունիստական թե-
քուններին հաշտողական վերաբեկմանքներ ցույց
տալու դեմ:

Համագումարը կուսակցության ուշադրութիւնը հրաւիրեց նաեւ ազգայնական թեքումների, մեծապետական շովինիզմի և տեղական ազգաբնականութեան դեմ վճռական պայքար մղելու անհրաժեշտութեան վրա, վորոնք դասակարգային պայքարի սրման կուսակցութեամբ ակտիվանում են յերկրում:

Տվյալ ետապում գլխավոր վտանգ և հանդիսանում լենինյան ազգային քաղաքականութիւնը վերաքըննել փորձողների մեծապետական թեքումը: Իսկ թեքումը դեպի տեղական նացիոնալիզմը թուլացնում և ԽՍՀՄ ժողովուրդների միասնութիւնը: «Կուսակցութիւնը պետք և ուժեղացնի պայքարն ազգային խնդրի շուրջը առաջ յեկած այդ յերկու թեքումների դեմ յեվ նրանց հետ հաշտութիւնների դեմ, միաժամանակ ուշադրութիւնը յարելով լենինյան ազգային քաղաքականութիւնը փաստորեն վարելու վրա ազգային անհավասարութեան ելեմենտները դուրս մղելու վրա յեվ Խորհրդային Միութեան ազգային կուլտուրաները յայնորեն զարգացնելու վրա» (Համագումարի վորոշումներէց): Տասնվեցերորդ համագումարը կուսակցութեանը զինեց լենինյան մարտական ծրագրով՝ սոցիալիստական ծավալուն հարձակումն ամբողջ աշխարհում շարունակելու համար:

Կուսակցութեան յեվ նրա լենինյան հիմնականութեամբ անխուսափելի դժվարութիւնները հաղթահարելով միայն կապահովվի վերջնական հաղթանակը:

Յուրաքանչյուր կուսակցական, կոմյերիտական, բանվոր, կոլտնտեսական պետք և խորապես ուսումնասիրի տաճնվեցերորդ պատմական համագումարի վորոշումը:

«Համագումարն անսասան վստահութիւնն հայանում թե Համ. ԿԿ (Բ) միլիոնավոր բանվորների յեվ կոլտնտեսականների համախմբելով լենինիզմի գրոշի տակ յեվ կարճելով դասակարգային թշնամիներին, մասսաներին կառաջնորդի դեպի սոցիալիստական ծավալուն հարձակումը յեվ կապահովի սոցիալիզմի վերջնական հաղթանակը ԽՍՀՄ-ում:

Համագումարն. անդրդվելի վստահութիւն և հայտնում վոր Համ. ԿԿ (Բ) բարձրացնելով ԽՍՀՄ հզորութիւնը, ամրապնդելով յեղբայրական կապերը կապիտալիստական յեվ գաղութային յերկրների բանվորների յեվ աշխատավորների հետ՝ կապահովի ԽՍՀՄ-ի ամրացումը, վորը միջազգային պրոլետարական հեղափոխութեան ամուր պարիսպն և» (Համագումարի վորոշումներէց):

V

ՀԱԳԱՍՅԱԿԸ ԶՈՐՍ ՏԱՐՈՒՏ

Համ. ԿԿ (Բ) տասնվեցերորդ համագումարը ինդուստրացման հանրագումարը բերեց: Համագումարը գահունակութեամբ դիտեց ԿԿ նշած և արդեն կենսագործված բարձր, բալլէնիկական տեմպերը. մասսաների իսկապես հերոսական, ստեղծագործական, աշխատանքային վերելքի հիման վրա՝ համագումարն անցավ «հնգամյակը չորս տարումը կատարել» լողունդի տակ, նշելով հետագա ինդուստրացման ուղիները:

«ԽՍՀՄ հաշվետու շրջանի ընթացքում թեվակոխեց սոցիալիստական շինարարութեան հսկայական ծավալման շրջանը: ԿԿ լենինյան ճիշտ քաղաքակա-

նով յունն ապահովեց սոցիալիստական ինդուստրիալի-
զոր թափը, բանվորական մասսաների մեջ հսկայա-
կան չափերով արտադրական հնարագիտագմ առաջ
բերեց, վորը հնարավորութուն տվեց կուսակցու-
թյանը հնգամյակը չորս տարումն իրագործելու խոն-
դիլը դնել իր առաջ: Կուսակցության ձեռք բերած
սոցիալիստական շինարարության տեմպերը հնարա-
վորութուն են տալիս Խորհրդային Միությանը պատ-
մական ամենակարճ ժամանակում տեխնիկ-տնտեսա-
պես հասնել յեվ անցնել կապիտալիստական առաջ-
նակարգ յերկրներին» (XVI-րդ համագումարի վերո-
շումներին):

Նախ և առաջ՝ տասնվեցերորդ համագումարը
սոցիալիստական շինարարության վերցրած տեմպերը
պահպանելու կողմն արտահայտվեց:

Ընկեր Ստալինն այդ առթիվ ասաց. «Մեր ար-
դյունաբերության տեմպի զարգացումն հետագայում
արագացնելը միայն հնարավորութուն կտա մեզ
տեխնիկ-տնտեսապես հասնել յեվ անցնել կապիտա-
լիստական առաջնակարգ յերկրներին»:

Այն մարդիկը, վորոնք շաղակրատում են, թե
անհրաժեշտ է իջեցնել մեր արդյունաբերության
զարգացման տեմպերը, սոցիալիզմի թշնամիներ յեվ
դասակարգային թշնամիների ազնետներն են հան-
դիսանում:

Յերկրի հետագա ինդուստրացման խոշոր կարե-
վորութուն ունեցող պրոբլեմը կառուցվող արդյունա-
բերության սերբիտորիալ գեոեղման պրոբլեմն է հան-
դիսանում:

Ներկայումս մեր արդյունաբերութունը հիմնա-

կանում հենվում է Ուկրաինայի ածխա-մետաղագոր-
ծական բազալի վրա, Դոնբասի հանածո հարստու-
թյան (ածուխ) և Կրիվոյ Րոգի հանածույի (չերկաթա-
հանք) վրա:

Համագումարը մատնանշեց, թե անհրաժեշտ է
հետագայում զարգացնել ինդուստրացման ուկրաինա-
կան բազան, խնդիր դնելով անհապաղ սկսել ստեղծել
չերկրորդ բազան—Ուրալ-Կուզնեցկիյ կոմբինատը—
Կուզնեցկիի ածուխի միացումը Ուրալի հանքի հետ:
Այդ նոր բազան պայմաններ կստեղծի ինդուստրիան
զարգացնելու մի շարք նոր շրջաններում—Սիբիր, Հե-
ռավոր Արևելք, Թուրքեստան: Այդ բազան սնունդ է
մատակարարելու Նիժնի-Նովգորոդում կառուցվող
ավտո-գործարանին, Չելյաբինսկում տրակտորի գոր-
ծարանին, Սվերդլովսկում մեքենա-շինարարական գոր-
ծարանին, Նովո-Սիբիրսկում և Սարատովի կոմբայների
գործարաններին, նորոգության արհեստանոցների
ցանցին, Սիբիրի և Կազակստանի աճող գունավոր մե-
տաղագործությանն սպասարկելու համար, Նովո-Սի-
բիրսկում և Թուրքեստանի մանածագործական ֆաբրի-
կաներին:

Համագումարը հերթի դրեց սև մետաղագործու-
թյան արագ զարգացման խնդիրը: Սև մետաղագոր-
ծությունը նշանակալից չափով չեա է մնացել ինդուս-
տրացման ընդհանուր տեմպերին: Հնգամյակի վերջե-
րին՝ որինակ, չուգունի իրական պահանջը 17 միլ.
տոննով կարտահայտվի, մինչդեռ հնգամյակը նկատի
յե առել արտադրել միայն 10 միլիոն:

Ապա, համագումարը մատնանշեց, թե վորոշ ան-
համաչափութուն, անհամադաստատանություն կա

ինդուստրիալի անձանք և առաջացրած եներգետիկ բա-
զայի միջև: Համագումարն անհրաժեշտ համարեց ընդ
դարձակել ելեկտրոշինարարությունն այն հաշվով, վոր
հնգամյակի վերջերին ելեկտրոններգիայով ապահովվեն
ամենակարևոր շրջանները—Դոնբասը, Կուզբասը, Լե-
նինգրադը, Մոսկվան, Նիժնիյ-Նովգորոդը, Ուրալը:

Կոլտնտեսական և խորհրտնտեսական շինարարու-
թյան և գյուղատնտեսության սոցիալիստական վե-
րակառուցման բոլորն անձանք կապակցությամբ համա-
գումարը ցանկություն հաշտեց թե գյուղատնտեսա-
կան մեքենաշինարարության, տրակտորաշինարարու-
թյան, ավտոշինարարության և քիմիական արդյունա-
բերության զարգացման բարձր տեմպերը պետք է
պահպանել այն հաշվով, վոր կարելի լինի հաղեցնել
գյուղատնտեսության հանրացված սեկտորը մեքենա-
ներով, տրակտորներով, պարարտանյութերով:

Մեր ժողովրդական տնտեսության մեջ մինչև
այժմ նեղ տեղ է հանդիսանում տրանսպորտը, համա-
գումարը դիրեկտիվները տվեց վերակառուցելու տրան-
սպորտը. հարմարեցնելով այն ժողովրդական տնտե-
սության աճող պահանջների սպասարկմանը:

Տասնվեցերորդ համագումարը խնդիր դրեց՝
զարգացնել թեթեւ ինդուստրիան, վորը առաջին
անհրաժեշտության առարկաներն են արտադրում:

«Մինչեւ այժմ կուսակցությունն աշխատում
էր խոշոր, ծանր արդյունաբերության վերականգման
վրա, վորը հիմքերի հիմքն է: Իսկ այժմ, յերթ ծանր
ինդուստրիան վերականգնել ենք, մենք կարող ենք
շուտ գալ դեպի թեթեւ ինդուստրիան յեւ առաջ վա-
րել այն արագացրած տեմպով» (Ստալին):

Ահա սրտնք են հիմնադրում յերկրի հետագա
ինդուստրացման ուղիները, վոր նշել է XVI հա-
մագումարը:

Այս բոլորը կուսակցությունը կկարողանա գլուխ
բերել միայն բանվոր դասակարգի ստեղծագործական
ենտուզիազմը և նախաձեռնությունը լայնորեն ծավա-
լելու ճանապարհով: «Բանվոր դասակարգի ամենա-
լայն մասսաների աշխատանքային վերելքը յեւ ստեղ-
ծագործական ենտուզիազմն իրենց արտահայտու-
թյունը գտան աշխատանքի նոր, սոցիալիստական
ծեղերի կազմակերպմանը մասսայորեն անցնելու մեջը
սոցիալիստական մրցման յեւ հարվածայնության,
վորոնք սոցիալիստական շինարարության մեջը նոր
եպոխա յեն բաց անում:

Այստեղ կուսակցությունը առաջիկայումն ել
պետք է հնգամյա պլանի կատարման դժվարություն-
ները հաղթահարելու յեւ սոցիալիզմի շինարարու-
թյան տեմպերն արագացնելու հիմնական աղբյուրը
վորոնի» (համագումարի վորոշումներից):

Հնգամյակն հաջողությամբ կատարելու գործում
բացառիկ նշանակություն է ստանում կադրերի պրոբ-
լեմը: Կուսակցությունն ընդհուպ մոտեցավ այդ պրոբ-
լեմի լուծմանը, կոնկրետ ուղիներ նշելով—բարձրա-
գույն տեխնիկական ուսումնական հիմնաբեկները, ֆաբ-
րիկ-գործարանային ուսումնական հիմնաբեկները և ամ-
բողջ ժողովրդական կրթությունը վերալազմության
յենթարկելու ուղիով պոլիտեխնիզմի սկզբունքներով
և ալլն:

Տասնվեցերորդ համագումարն անհրաժեշտ համա-
րեց ընդարձակել ֆաբգործականների ցանցերը, կարճա-

Ժամանակյա ձևեր ստեղծել բանվորական ուժերը հա-
խապատրաստելու և վերապատրաստելու համար:

Համագումարը հավանություն տվեց Համ. ԿԿ (Բ)
ԿԿ վորոշմանը բարձրագույն դպրոցը վերակազմելու
մասին և առաջարկեց ամենակարճ ժամանակում ար-
մատական բեկումն կատարել այդ վճռական խնդրում:

«Անողոր պայքար մղելով տնտեսական որգան-
ներում տեղի ունեցող հակահեղափոխական վնասա-
րարության դեմ անհրաժեշտ և առաջիկայումն ել
ուղադիր վերաբերմունք յեվ խնամք ցույց տալ դեպի
այն բոլոր մասնագետները, վորոնք սոցիալիստական
տնտեսության զարգացման վրա յեն աշխատում (հա-
մագումարի վորոշումներից):

Քաջալերելով անընդհատ շաբաթվան անցնելու
փորձը, վորը նպաստում է մի շարք ձեռնարկություն-
ների արդեֆինալանի կատարմանը, համագումարը վո-
րոշեց անընդհատ շաբաթ մտցնել արդյունաբերության
բոլոր հիմնական ձյուղերը:

Համագումարը մեծ ուղադրություն նվիրեց ռա-
ցինալացման, սոցիալիստական մրցման, հարվածայնու-
թյան խնդիրներին: Սոցիալիստական ռացիոնալացումը
ծածկված հզոր ներքին պահեստները հավաքի յեն-
թարկելու և ինքնարժեքն իջեցնելու լավագույն յեղա-
նակն է: Ռացիոնալացումը պետք է ձեռնարկության
տեխնիկա-արտադրական աշխատանքի կենտրոնումը
լինի: Արդյունաբերության ամբողջ սիստեմում վերից
վար ռացիոնալացման որգանները պետք է ամրացվեն:
Ռացիոնալացման ամբողջ աշխատանքը պետք է ամե-
նասերտ կերպով կապվի հարվածայնության և սոցիա-
լիստական մրցման հետ. սրանց հետ միասին, պետք է

լայնորեն զարգանա բանվորական գյուտարարու-
թյունը:

Անհրաժեշտ և լայնորեն ծավալել փորձի փոխա-
նակությունը ԽՍՀՄ ձեռնարկությունների միջև և փոր-
ձի փոխադրությունն արտասահմանից՝ աֆտեղ դոր-
ծողութիւններով մարդիկ ուղարկելու ճանապարհով, տեխ-
նիկական գրականությունը ուսանողներին թարգմանելու
ճանապարհով և այլն:

Սրա հետ միասին, համագումարը լարեց ուղա-
դրությունը աշխատանքի արտադրողականությունը
բարձրացնելու, ինքնարժեքն իջեցնելու, արտադրանքի
վորակը բարձրացնելու վրա. «Բայլշեմիկները պետք
է ցույց տան, թե իրենք կարող են գլուխ բերել նաեվ
այս խնդիրը» (Ստալին):

Յեվ վերջապես, մեր արդյունաբերության հա-
ջող զարգացման ամենալուրջ խնդիրների շարքում մեծ
նշանակություն ունի արդյունաբերությունը միանձ-
նյա ղեկավարությամբ կառավարելու պրոբլեմը: Միանձ-
նյա ղեկավարության վարչական ձևին պետք է առա-
վելագույն ուղադրություն նվիրեն կուսակցական և
արհմիութենական կազմակերպությունները ալն
նկատառումով, վորպեսզի ամենամոտ ժամանակում
գործնականորեն լուծվի այս պրոբլեմը:

Տասնվեցերորդ համագումարը հենվելով կուսակ-
ցության կուտակած փորձի վրա ինդուստրացման
բնագավառում, նշեց հնգամյակն իրականացնելու հե-
տագա ուղիները՝ լարված բարձր տեմպերի պայմա-
նում:

Հեգամյակը պետք է իրագործվի չորս օտուում
պետ հովազումաբի առաջագրությունը:

ԿՈՆԵՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՍԱՐՆԵՐԸ

Համագումարների միջանկյալ անցած շրջանը բնորոշվում է աշխատավոր գյուղացիության հիմնական մասայի մի շրջադարձով, վորով նա յերեսը դեպի կոլտնտեսական շարժումը դարձրեց: «Միջակային մասսաների վճռական շրջադարձը՝ վոր կուսակցության նիշտ քաղաքականության հետեւանք է, իր ամենացայտուն արտահայտությունը գտավ կոլտնտեսական հզոր շարժման մեջ, վորը 1929 թվականի վերջին ընդգրկեց գյուղացիական միլիոնավոր տնտեսություններ, ստեղծելով դասակարգային ուժերինոր փոխհարաբերություն յերկրում, կոլտնտեսություն մտնող միջակն խորհրդային իշխանության հենարանը դարձնելով, հացի կուլակային արտադրությունը խորհրդատնտեսությունների յեվ կոլտնտեսությունների արտադրությամբ փոխարինելու պայմաններ ստեղծելով յեվ հնարավորություն տալով կուսակցությանը կուլակությունը սահմանափակելու յեվ դուրս մղելու լողունգից անցնելուն՝ կուլակությունը, վորպես դասակարգ վերացնելու լողունգին՝ համատարած կոլեկտիվացման հիմունքով» (XVI համագումարի վորոշումներին):

Կոլեկտիվացման լողունգը ՀԱՄ. ԿԿ (Բ) XV համագումարը հայտարարեց: Բաց այդ շրջադարձը նախապատրաստվեց քաղաքականության ամբողջ ընթացքով և մեքենային ինդուստրիայի ընդհանուր զարգացումով, վորը գյուղատնտեսությանը մեքենաներ և տրակտորներ և մատակարարում, վճռական պալքար

մղելով կուլակության դեմ, բատրակներին և չքավորներին կաղմակերպելով—և ամուր դաշինք կնքելով միջակի հետ —, գյուղատնտեսական կոոպերացիաները զարգացնելով և իրազնական յեղանակով ցույց տալով կոլեկտիվ տնտեսության առավելությունները կոլտնտեսությունների արդեն ստեղծված ցանցի որինակով:

Բաց նախապես միքանի թվեր բերենք, վորոնք բնորոշում են գյուղատնտեսության դրությունը:

Յեթե 1913 թվականի հացահատիկային կուլտուրայի ցանքի տարածությունն ընդունենք 100%₀, 1926-27 թվականներին նա կաղմում եր 96,9%₀, 1927-28 թթ.—94,7%₀ (կրճատումը անբերրիության հետևանք է), 1928-29 թթ.—98,2%₀, 1929-30 թթ.—105,1%₀:

Անբարենպաստ պատկեր և ներկայացնում հացահատիկային տնտեսության ապրանքայնությունը: Յեթե 1913 թվականի համար դարձյալ 100%₀ ընդունենք, մեր հացահատիկային տնտեսության ապրանքայնությունը, այսինքն՝ այն մասը, վոր գյուղացիությունը շուկա յե հանում, 1927 թվականին կաղմում եր 37%₀, 1928 թվականին—36,8%₀, 1929 թվականին—58%₀, 1930 թվականին—73%₀:

Վրդովեցուցիչ և նաև անասնապահության դրությունը:

	1916	1927	1928	1929	1930
	Թիվ	Թիվ	Թիվ	Թիվ	Թիվ
Ոռոյր յեղնեղվոր անասուն	100% ₀	114,3% ₀	118,5% ₀	115,6% ₀	89,1% ₀
Վոշխարներ և այծեր	100% ₀	—	126% ₀	127,8% ₀	87,1% ₀
Ոռգեր	100% ₀	—	129,1% ₀	103% ₀	60,1% ₀
Զբյեր	100% ₀	88,9% ₀	94,6% ₀	96,9% ₀	88,6% ₀

Անասնապահական տնտեսությունների կրճատումն ակնհայտ է: Ե՛լ ավելի անմիջապես պատկեր է ներկայացնում անասնապահական տնտեսության ապրանքայնությունը: «Այսպիսով, մենք անասնապահության մեջ մանր և մանրապրանքային տնտեսության անկաշտություն և տնտեսական անհույսության պարզ նշաններն ենք տեսնում» (Ստալին):

Հակառակ պատկեր է ներկայացնում տեխնիկական կուլտուրաների զարգացումը, վերոնշյալ մեր արդյունաբերությունը հոմալի բազա յեն ընձեռում:

	1913	1927	1928	1929	1930
	թիվ	թիվ	թիվ	թիվ	թիվ
Բամբակ	100 %	107,1 %	131,4 %	151,4 %	217 %
Վուշ	100 %	86,6 %	85,7 %	112,9 %	125 %
Շաքարի բազուկ	100 %	106,2 %	124,2 %	125,8 %	169 %
Զիթաբերներ	100 %	179,4 %	230,9 %	219,7 %	260 %

Աճում է նաև տեխնիկական կուլտուրաների անգույն արտադրանքը: Թե սրա կապակցությամբ ի՞նչ խնդիրներ չենք լուծել առաջ ՀԱՄ. Կ (բ) Կ XVI համագումարը, այդ մասին մանրամասն կպատմվի հաջորդ գլխում,

Իսկ ի՞նչ հանրագումարներ ունենք մենք կոլեկտիվացման ընթացքում: Կոլեկտիվացման բնագավառում, համեմատաբար կարճ ժամանակում, մենք անսխալ ճանաչում ենք հաջողություններ ունենք: 1930 թվականի մայիսի 7-ին հացահատիկային հիմնական շրջաններում կոլեկտիվացումը գյուղացիական տնտեսությունների 40—50 % ընդգրկեց, փոխանակ 1928 թվականի դարձան 2—3 %-ի:

Կոլտնտեսությունների ցանքի տարածությունը կազմում էր՝ 1927 թվականին 0,8 միլիոն հեկ., 1928 թվականին—7,4 միլ. հեկ., 1929 թ.—4,3 միլ. հեկ., 1930 թվականին—36 միլիոն հեկտարից վոչ պակաս: Կոլտնտեսությունների ցանքի տարածությունն աճել է ավելի քան 70 անգամ: Կոլտնտեսություններն այժմ ԽՍՀՄ-ում ցանքսի այնքան տարածություն ունին, վերջինս նրանց Խրանսիան յեվ Իտալիան միասին վերջրած:

Իսկ անգույն արտադրանքը հացահատիկային կոլտնտեսություններում աճել է 3 տարվա մեջ ավելի քան 50 անգամ, ապրանքայնությունը — ավելի քան 40 անգամ: Այս տարի հացահատիկային կոլտնտեսությունները լերկրի հացահատիկային ապրանքային արտադրանքի կիսից ավելին կտան:

Նշանակալից չափով աճում կա նաև խորհրդային սովետական շինարարության մեջ:

